
ԾԻԱԾԱՆԸ ՀԱՅՈՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ծիածանի և նրա հետ առնչվող երևույթների վերաբերյալ պատկերացումների քննությունը բացահայտում է զուգահեռ իրողություններ աշխարհի ամենատարբեր ժողովուրդների մեջ, որոնք, ակնհայտորեն, պիտի ծագեին մարդկության ձևավորման ամենավաղ դարաշրջաններում: Այս հարցերի մեծագույն մասը դեռևս բավարար ուսումնասիրված և համեմատական քննության ենթարկված չէ: Հատկանշական է, որ «ծիածան» բառահոդվածը չկա աշխարհի հեղինակավոր առասպելաբանական հանրագիտարաններում: Սույն հոդվածը հայկական նյութի ներկայացումն է, ապա և առաջին մոտեցմամբ քննարկումը համեմատական համատեքստում: Հայկական ավանդույթի կարևոր առանձնահատկությունն է, որ այն բացահայտորեն մատնանշում է այս երևույթների կապը տիեզերածնության հնագույն առասպելների և հատկապես «սրբազան հարսանիքի» հետ:

Հայկական բարբառներում «ծիածան» հասկացության անվանումները կազմում են հիմնականում երեք մեծ խումբ, բազմաթիվ տարբերակներով¹:

ա) գոտի, գոտեկ, գոտիկ, աստծու գոտի, Հիսուսի գոտի, Աստվածամարու գոտի, Մարիամ, մարի/մոր գոտի, ծիրանի գոտի, կանաչ-կարմիր գոտի, սուրբ Կարապետի գոտի, Աստվածհայրիզի գոտի, Աստու մըշկապ (այսինքն՝ միջկապ «գոտի») և այլն, տարածված Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններում (Կարին, Երզնկա, Խարբերդ, Կեսարիա, Սեբաստիա, Կիլիկիա, Անտիոք, Տրապիզոն, Կոստանդնուպոլիս, Նոր Նախիջևան և այլն):

բ) աղեղ, աղեղնավոր, աղեղնակ, անեղնակ, անանակ, յեղյակ, յաղյակ, Հիսուսի աղեղնակ, Աստու անըղնակ, կարմիր-կանաչ աղեղնուկ և այլն, տարածված Հայկական լեռնաշխարհի հարավկենտրոնական և հարավային տարածքներում (Մուշ, Մասուն, Այաշկերտ, Վան, Մոկս, Շատախ և այլն):

գ) կանաչ-կարմիր, կանաչ-կապույտ, երբեմն, ինչպես տեսանք, հավելվելով աղեղ և գոտի բառերին, տարածված արևելյան շրջաններում (Երևան, Էջմիածին, Արարատ, Կոտայք, Լոռի, Տավուշ, Սյունիք, Արցախ, Վայք, Նախիջևան, Պարս-

¹ Այս հոդվածի հետ կապված որոշ նյութերի՝ անվանումների և հավատալիքների վերաբերյալ տեղեկությունների և քննարկման համար պարտական եմ Նինո Ապցխաուրիին, Դալի Չիտունաշվիլուն, Ջոյա Սպիրիդոնովային, Տաիսա Մուրադովային, Գայանե Շագոյանին, Լուսինե Սահակյանին, Յուրի Բերյոզկինին, Ջուրաբ Ջապուային, Մաքսիմ Խատոյանին, Հասան Թամոյանին, Արամ Թոփյանին, Վարդան Ոսկանյանին և Լևոն Աբրահամյանին, որոնց հայտնում եմ իմ խորին երախտագիտությունը:

կահայք): Այս անվանումներից առաջինը զուգահեռներ ունի Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հյուսիսային լեզուներում (հունարեն, թուրքերեն, վրացերեն), երկրորդը՝ թեև նույնպես լայնորեն տարածված է, բայց հատկապես բնորոշ է Հայաստանից հարավ տարածված սեմական լեզուներին և պարսկերենին: Առաջին անվանումը գալիս է հին հայկական (և տարածաշրջանային) պատկերացումներից, իսկ երկրորդը, չնայած հնագույն զուգահեռներին աշխարհի տարբեր լեզուներում, երկրորդային լայն տարածում է ստացել քրիստոնեության և իսլամի տարածման հետ, աստվածաշնչյան և արաբական ազդեցությամբ: Երրորդ անվանումը հարում է ծիածանի այլալեզու գունային անվանումներին, բայց առանձնահատուկ հայկական երևույթ է, որն ուղղակի զուգահեռներ համարյա չունի (կա միայն քրդերենում, տե՛ս ստորև):

Գրանցված են նաև սահմանափակ տարածում ունեցող մի շարք այլ անվանումներ՝ անձրևի հարս, ծովյան, օրոտիկ, աղավնի/ աղավնիկ, նշանակ, կամար և այլն: Այս նյութերը դասակարգվել, քննարկվել և մեկնաբանվել են Անահիտ Հանեյանի երկու հոդվածներում²: Մտորն մենք լայնորեն օգտվում ենք այդ հոդվածներից:

Այսպիսով՝ ծիածանի անվանումները հայերենում ներկայացված են բավականին հարուստ: Այս երևույթը շատ տարածված է աշխարհում՝ ամենուրեք, ինչպես հայերենում, կան ծիածանի մի քանի անվանումներ: Որպես օրինակ հիշենք սլավոնական որոշ անվանումներ՝ дуга, райская дуга, райдуга, божья дуга, веселка, веселуха, божий лук, пояс, божий пояс, пояс господа, бабин пояс, пояс самовил, краса, красуля, богатка, зунница, виножито, божилак, тканица: Բայց և այնպես, այդ անվանումների կադապարների թիվը շատ սահմանափակ է՝ «գոտի», «աղեղ», «օձ», «կամուրջ» և այլն, որոնցից վերջին երկու ձևերը հայերենում չկան:

Ըստ Յ. Բերյոզկինի դիտարկման (անձնական հաղորդում), անվանումների բաշխման հիման վրա կարելի է կարծել, որ, սկսած մարդու ծագումից Աֆրիկայում, ծիածանի առաջնային անվանումն է եղել «օձը» (այս անվանումն ի հայտ է գալիս Աֆրիկայում, Եվրոպայում, հարավային և հարավարևելյան Ասիայում, Ավստրալիայում, Օվկիանիայում և Ամերիկայում): Մյուս տարածված անվանումները՝ «գոտի» և «աղեղ», ավելի ուշ են և կապված են մարդու ստեղծած երևույթների հետ: Սրանցից առավել հին կարող է լինել գոտին (գոտին և հագուստը հայտնի են ամենուրեք, բացի Ավստրալիայից), իսկ աղեղը, զոնե որպես զենք, ի հայտ է գալիս ավելի ուշ: Ապա, ծիածանի նկատմամբ վերաբերմունքը աֆրիկա-հնդ-խաղաղօվկիանոսյան և մայրցամաքային եվրասիական գոտիներում հակադիր է՝ խիստ բացասական առաջին դեպքում և առավելապես դրական՝ երկրորդում: Ընդ որում, առաջին մոտեցումն ավելի հին է՝ նշված տա-

² Ա. Հ ա ն է յ ա ն. Հայ բարբառներում «ծիածան» հասկացության բառանվանումների հոգևոր-մշակութային արժեքը. - Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001, ն ռ ւ յ ն ի՝ «Ծիածան» հասկացության բառագուգարանությունների լեզվաաշխարհագրական բնութագիրը և հոգևոր մշակութային արժեքը. - Նյութեր մաշտոցյան գրերի 1600-ամյակին նվիրված գիտաժողովի, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 2005:

րածքները մարդու կողմից բնակեցվել են շատ վաղ և ներկայումս էլ բնակեցված են առավել վաղնջական հասարակություններով:

Ծիածան-գոտի

Ծիածանի մի շարք հին հայկական անվանումներ կապված են «գոտի» գաղափարի հետ՝ գոտի, տերունեան գոտի, տիրական գոտի, գոտի աստուածական և աստուածականար, այսինքն՝ «աստծու գոտի»։ հայտնի է նաև Արամազդայ գոտի կամ գոտի Արամազդայ ձևը, հին հայոց գերագույն աստված Ջես-Արամազդի անունից, առաջին անգամ՝ Փիլոնի թարգմանության մեջ (բնագրի այդ հատվածները չեն պահպանվել, բայց հունարենում նման անվանում գտնել չհաջողվեց), երկրորդը՝ Թովմա Արծրունու մոտ: Այսպիսով՝ հնից մինչև մեր օրերը, հայկական առասպելաստեղծ մտածողության մեջ ծիածանն ընկալվել է որպես գոտի, որը գոտևորում է երկինքը՝ երկնային աստծուն կամ դիցաբանական որևէ երկնային կերպարի: Ի միջի այլոց, բալ արեգական/ լուսնի, այսինքն՝ «արևի/ լուսնի շրջանակ/ գոտի» է կոչվել և արևի ու լուսնի շուրջը երբեմն երևացող ծիածանագույն շրջանակը³:

Ծիածանի՝ որպես «գոտի», կամ հագուստի կապ ընկալումը լայնորեն տարածված է աշխարհում (Եվրոպայի հին ու նոր ժողովուրդներ, Աֆրիկա, Առաջավոր և Կենտրոնական Ասիա, Հնդկաստան, Չինաստան, Բնդոնեզիա, Սիբիր, Պոլինեզիա, ամերիկյան հնդկացիներ): Մեզ՝ տարածքային և մշակութային առումով համեմատաբար մոտ լեզուների անվանումներից հիշենք ֆրանս. «բարի աստծու/ սուրբ Բարնաբեի/ Մարտինի գոտի», լատվ. «աստծու գոտի», լիտվ. «համաձայնության գոտի» (աստծու հետ համաձայնության կամ ուխտի վերաբերյալ այս համատեքստում տե՛ս ստորև), սերբ-խորվաթ. «Մարիայի (Մարիամի) գոտի», բոսն. «աստծու գոտի», «այբան. «Կույսի (աստվածամոր) գոտի», հուն. «կրոնավորուհու/պառավի գոտի», ռումին. «աստծու գոտի», թուրք. «երկնքի/տատիկի (պառավի)/ անձրևի գոտի», վրաց. «երկնքի գոտի», օս. «երկնքի գոտի», քրդ. (Ադրբեջան) «Ֆաթիմա մայրիկի գոտի», ռուս. «Դորրինյա/Տիմոնյա ոսկե գոտի», դազախ. «պառավի պարան/գոտի» և այլն: Ծիածանի՝ որպես գոտի կամ ժապավեն (հաճախ կանացի) պատկերացումը համարյա համաեվրոպական է. այն հանդիպում է հնդեվրոպական՝ այբաներեն, հունարեն, բալթիական, կելտական, ռոմանական, սլավոնական, գերմանական, իրանական, սպա և ֆիննական, քարթվելական, նախ-դադստանյան, թուրքական լեզուներում (հետաքրքիր է, որ լիտվական, սլավոնական և հունական անվանումները հանգում են հնդեվրոպական նույն՝ *ius- «գոտևորել» արմատին՝ հմմտ. ռուս. пояс «գոտի», ինչը տեսականորեն թույլ է տալիս համաարևելաեվրոպական մի վերակազմության՝ ծիածանը որպես մի կանացի առասպելական կերպարի գոտի)⁴:

³ Տե՛ս Նոր բառգիրք հայկազյան լեզուի, հ. Ա, Երևան, 1979, և Առձեռն բառարան, Անթալիաս, 1988 – համապատասխան բառահոդվածները:

⁴ Ծիածանի՝ տարբեր լեզուներում ունեցած անվանումների և համապատասխան բանահյուսական մոտիվների ու հավատալիքների վերաբերյալ տե՛ս հատկապես Ю. Е. Б е р е з к и н. Тематическая классификация и распределение фольклорно-мифологических мотивов по ареалам. –

Այսպիսով՝ Հայկական լեոնաշխարհում և հարևան երկրներում տարածված բազում լեզուներում ծիածանն ընկալվել է որպես գոտի: Այս շարքին է պատկանում նաև հենց ծիածան բառը, որի երկրորդ մասը պետք է հանգեցնել ածանիմ «մեջքը կապել» բառին, ածեմ արմատից (հնդեվրոպական *h₂egʷ-/*agʷ-), որի իմաստներից է «պատել, բռնել, կապել»⁵: Ի միջի այլոց, Նոր հայկազյան բառարանն արդեն ճիշտ մեկնաբանում է բառի երկրորդ մասը ածեմ արմատից՝ ծիրածեալ, ածող: Առաջին մասի այս մեկնաբանությունը լեզվաբանորեն հնարավոր չէ և անընդունելի է: Բերված զուգահեռների համատեքստում այն պետք է կապվի «երկինք» կամ «երկնային մի աստվածություն/կերպար» նշանակող անվանման հետ (հմտ. ասու մըշկապ «աստծու գոտի» անվանումը): Ըստ այդմ, այն պետք է հանգեցնել հնդեվրոպական *dyē-/*dye(u)- «երկինք, ցերեկ, արև (արևի աստված)», *deiwo-/*dyeu- (*ph₂ter-) «աստված, լուսավոր երկնքի (հայր) աստված» հիմքին (*dei- «փայլել» արմատից), որոնց ժառանգներն են հայ. տիւ «ցերեկ» և տի «օր» (հմտ. երկտի «երկու օր») բառերը: Բառակազմի ծի-ն հնարավոր տի(ւ)-ի փոխարեն կարելի է բացատրել որպես կանոնավոր զարգացում հնդեվրոպական *dyē-ից (որը կարող էր տալ ծի կամ ճի) կամ տ- > ծ-, ճ- > ծ- հետադարձ առնամանությամբ, իսկ ւ-ի բացակայությունը՝ արմատի ծի/ճի կամ տի ձևից կամ միջձայնավորային դիրքով պայմանավորված անկամաբ⁶, օրինակ, ա) *dyē- + *agʷ- > ծի-ած-ան, կամ ճի-ածան > ծիածան, բ) տի-ածան > ծիածան, գ) տի-ածան > ծիածան: Պետք է հաշվի առնել նաև դիցանունների տարուավորման հավանական գործոնը, որը ևս կարող էր վերափոխել բառի նախնական ձևը⁷, ապա, ծիրանի գոտի անվանաձևի ազդեցության հնարավորությունը: Անկախ տարբեր նախաձևերի կանխադրման հնարավորությունից, բառի այս մեկնաբանությունը կասկած չի հարուցում⁸:

Аналитический каталог (<http://starling.rinet.ru/kozmin/tales/index.php?index=berezkin>), 39-42, 45-47, 92, 96 և 97 մտտիվները, ուր հսկայական ինֆորմացիա է հավաքված (ծիածան-գոտու մասին՝ 46). տե՛ս և WordReference.com Language Forums (<http://forum.wordreference.com/showthread.php?t=599070&page=2>),

M. A l i n e i. Magico-Religious Motivations in European Dialects: a Contribution to Archaeolinguistics.– Dialectologia et Geolinguistica, 1997 (http://www.continuitas.org/texts/ alinei_magico-religious.pdf), V. S a r a p i k. Rainbow, Colours and Science Mythology (<http://www.folklore.ee/Folklore/vol6/rainbow.htm>),

A. Н. А ф а н а с ь е в. Мифология древней Руси. М., 2007, с. 112–114, Радуга (в славянской мифологии). <http://www.wikiznanie.ru/ru-wz/index.php/Радуга> (в славянской мифологии):

⁵ Տե՛ս Նոր հայկազյան, Առձեռն և Հ. Աճառյանի արմատական բառարաններում:

⁶ Հայերենում *dy-ի արտացոլման և միջձայնավորային ւ-ի անկման վերաբերյալ տե՛ս, օրինակ, Г. Б. Д ж а у к я н. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982, с. 61–62, 421:

⁷ Տ արուավորման վերաբերյալ, այս համատեքստում, տե՛ս, օրինակ, R. J a k o b s o n. Selected Writings. Vol. 7. The Hague, 1985, p. 13, գրականությամբ և վառ օրինակներով (օրինակ՝ ամեր. անգլ. gosh «աստված» god-ի փոխարեն, սերբ. бора ми, брода ми «աստված իս» бора ми - ի փոխարեն):

⁸ Ծիածանի առաջին մասը ճիշտ ստուգաբանել է Հրայ Մարտիրոսյանը, որն աստվածաշնչյան լեզենդի և Ակնից գրանցված նշանակ անվանման հիման վրա մեկնաբանում է այն որպես տի(ւ)-ա-ծան, իբրև «աստծու/երկնքի նշան», վերականգնելով ծան-ը որպես «նշան», հնդեվրոպական *gʷenh₃-ից, հմտ. հայ. ծան- «ճանաչել, գիտենալ», ռուս. знак «նշան», տե՛ս Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. Հնդեվրոպական «երկնային հայր, աստված» բառի հետքերը հայերենում. – Խաղյան գորությունը... հողվածների ժողովածու նվիրված Բորիս Պիոտրովսկու ծննդյան 100-

Ծիածան անվանումն, այսպիսով, գալիս է խոր հնությունից, երբ հայերենում դեռ պահպանվել էին հնդեվրոպական լուսավոր երկնքի հայր աստծու հետ կապված պատկերացումները: Ի միջի այլոց, տիրական/ տիրկան գոտի անվանումը վերագրվել է հին հայոց՝ իրանական ծագման Տիր աստծուն⁹: Հետաքրքիր է, որ հայկական Տիրը, հայտնի նաև Տիր ձևով, ի տարբերություն իր իրանական նախատիպի, նույնացվել էր հունական արևի աստված Ապոլոնի հետ (հավանաբար հնագույն *Տիւ դիցանվան հետ նման հնչողության պատճառով)¹⁰: Ըստ այդմ, Տիր դիցանունը հայերենում, ամենայն հավանականությամբ, ներառել է հնագույն *Տիւ աստծու հիշողությունը, հետագայում բաղադրվելով նաև տէր, թեք ձևերում՝ տիր- (հմմտ. տիրոջ, տիրական) ձևերի հետ:

Տիրի և ծիածանի կապը հաստատվում է իրանական ազգագրական նյութով: Իրանում Տիրին կամ Տիրը անձրևային աստվածություն էր և նրա տոնը՝ տիրագան/ տիրիկանը որոշ առումով համապատասխանում է հայկական վարդավառին: Հատկանշական է, որ այդ տոնի ժամանակ կանայք և երեխաներն իրենց բազուկներին բազմագույն մետաքսե ապարանջաններ են կապել, որոնք խորհրդանշել են ծիածանը¹¹ (հմմտ. տիրկան գոտի): Ծիածանի կապը անձրևի աստվածության հետ հիշեցնում է ծիածանի առնչությունը աստվածաշնչյան ջրհեղեղի պատմությունը: Իրանական Տիրը փոխառված է հին Միջագետքից և ներկայացնում է հինմիջագետքյան Նաբու աստծու վերանվանված կերպարը¹²: Ըստ այդմ, գայթակղիչ է թվում Տիրի և ծիածանի առնչության մեջ փորձել տեսնել ծիածանի հինմիջագետքյան՝ շումերական *tir.an.na* կոչման (նաև դիցանուն է) արձագանքը:

Ծիածան-աղեղ

Աղեղն բառի «ծիածան» նշանակությունը ավանդված է արդեն հինգերորդ դարից: Ծիածանի՝ որպես «աղեղ» ընկալումը ևս լայնորեն տարածված է աշխարհում (Եվրոպայի հին ու նոր ժողովուրդներ, Աֆրիկա, Կովկաս, Առաջավոր և Կենտրոնական Ասիա, Հնդկաստան, Բնդոնեզիա, Միբիր, ամերիկյան հնդկացիներ): Առաջին հերթին հարկ է հիշել հինմիջագետքյան պատկերացումը՝ շումերական *tir.an.na* «ծիածանը»՝ բառացի՝ «անտառ-երկնքի», սեռական հոլովով,

ամյակին, Երևան, 2010: Ինչպես նշվել է, ծիածանի համար ողջ աշխարհում հայտնի են բավական սահմանափակ քանակությամբ անվանման կադապարներ: Հայերի, նրանց համարյա բոլոր հարևանների և աշխարհի հարյուրավոր այլ ժողովուրդների մեջ այն կոչվում է «(աստվածության/ երկնքի) գոտի», իսկ «նշան» անվանում գրանցված չէ ողջ աշխարհում: Նշանակ ձևը գալիս է Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից (տե՛ս ստորև. քրիստոնեական ժողովուրդների մեջ էլ կարելի է գտնել աստվածաշնչյան ազդեցությամբ կերտված նման մեկ-երկու ուշ երկրորդային ձև): Այն ժողովրդական ակունքներ չունի և չէր կարող նախաքրիստոնեական տերմինի հիմք դառնալ: Իսկ Աստվածաշնչում աստծու կողմից իր աղեղ-ծիածանը որպես ուխտի «նշան» ստեղծելը անվանման ձև չէ (այնտեղ անվանումը «աղեղն է»), այլ աստվածաբանական մեկնաբանություն:

⁹ Ղ. Ա լ ի շ ա ն. Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 119.

¹⁰ A. P e t r o s y a n. State Pantheon of Greater Armenia: Earliest Sources. – Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, 2007, 2, p. 184.

¹¹ M. B o y c e. Iranian Festivals.– The Cambridge History of Iran. Vol. 3 (2): the Seleucid, Parthian and Sasanian Periods. Cambridge 1983, p. 803.

¹² М. Б о й с. Зороастрийцы. Верования и обычаи. М., 1987, с. 77.

այլ կերպ մեկնաբանվում է որպես «երկնքի աղեղ» (տե՛ս ստորև): Հանրահայտ է Աստվածաշնչի՝ ջրհեղեղի հետ կապված պատկերը, երբ աստված իր աղեղը՝ ծիածան է ստեղծում որպես ուխտի (համաձայնության) նշան իր և աշխարհի միջև (Ծննդոց, Թ. 13-17):

Ստորև ներկայացնենք մի շարք օրինակներ՝ բայթիական «աստծու աղեղ», կելտ. «համաձայնության աղեղ», հին հուն. «երկնքի աղեղ», նոր հուն. «երկնքի / կույսի (կուսակրոնուհու) աղեղ», լատ. «անձրևի / երկնքի/ գույնզգույն աղեղ», ուելս. «պառավի աղեղ», կատալոն. «սուրբ Մարտինի / Հովհաննեսի աղեղ», ֆրանս. «աստծու / սուրբ Մարտինի / Բերնարդի / Միքայելի / անձրևի աղեղ», պորտուգալ. «աստծու / Նոյի / Կույսի (Աստվածամոր) / պառավի աղեղ», իտալ. «սուրբ Մարիամի / Հեղինեի / Մարկոսի աղեղ», իսպան. «տիրոջ / սուրբ Հովհաննեսի աղեղ», ասոր. «մեր տիրոջ աղեղ», արաբ. «Ալլահի / մարգարեի / երկնքի աղեղ», պրսկ. «աստծու / Ռուստամի / գունավոր աղեղ», օս. «երկնքի / Սուլանի աղեղ», թուրք. / ադրբ. «(Ալլահի / Հասանի / Հուսեյնի) աղեղ», դադստանյան լեզուներում՝ «(որևէ) աստծու աղեղ», կումիկ. «վիուկի աղեղ», և այլն¹³: Սրանց հետ նույնական է, բայց արդեն կապված չէ կրոնական անվանումների հետ գերմանական լեզուների «անձրևի աղեղ»:

Աստվածաշնչյան պատկերը գալիս է հին Միջագետքից ու սեմական աշխարհից («ծիածան-աղեղ», ինչպես տեսանք, առկա է շումերերենում և սեմական այլ լեզուներում՝ ասորերենում և արաբերենում), բայց ծիածանի «աղեղ» անվանումը հատուկ է աշխարհի բազմաթիվ, ոչ սեմական և աստվածաշնչյան կրոնների հետ կապ չունեցող ժողովուրդների ևս (օրինակ՝ հունարենում «երկնքի աղեղ» հայտնի է Աստվածաշնչի ազդեցությունից շատ առաջ, մ.թ.ա. IV դ. հեղինակ Էսխիրոնի մի հատվածից. հին է և լատիներենում՝ Հորացիոս և այլք):

Երկնային աստծու առասպելների զարգացման սկզբնական աստիճանին երկնային երևույթները պատկերացվում էին որպես աստծու ատրիբուտներ, և ծիածանը կարող է հանդես գալ որպես աստծու աղեղ¹⁴: Աղեղ-ծիածանի՝ որպես աստծու ուխտի նշան, աստվածաշնչյան պատկերը, ըստ մի կարծիքի, համադրելի է հին միջագետքյան (աքադական) «Գիլգամեշ» էպոսի մի դրվագի հետ, ուր, ջրհեղեղից հետո, Իշտարը բարձրացնում է իր լազուրե ուլունքը և երդվում, որ այլևս չի մոռանա այդ ջրհեղեղյան օրերը (պնակիտ XI, 162-165)¹⁵: Իսկ հին բաբելոնյան տիեզերածնության «Էնումա էլիշ» առասպելում Մարդուկը՝ Բաբելոնի գերագույն աստվածը, իր աղեղից արձակված նետով է սպանում հակառակորդ հրեշին, ընդ որում, այս աղեղը ևս, որը կապվել է Իշտար աստվածուհու հետ,

¹³ Ю. Е. Березкин. *Նշվ. աշխ.*, 40, М. А l i n e i. *Նշվ. աշխ.*, տե՛ս և Р. И. Сефербеков. Верховные боги (громовержцы) народов Дагестана. – Вестник Института истории, археологии и этнографии. Махачкала, 2005, 4, с. 77.

¹⁴ Мифы народов мира, т. 2. М., 1982, с. 208:

¹⁵ *Այս մասին եղած կարծիքների վերաբերյալ տե՛ս* A. Heidel. The Gilgamesh Epic and Old Testament Parallels. Chicago 1963, p. 259. <http://books.google.am/books?id=iRwMQVdZegAC&pg=PA259&lpg=PA259&dq>.

կարող է խորհրդանշել ծիածանը¹⁶: Ծիածան աղեղի՝ դիցունիու կամ առասպելական այլ կանացի կերպարի հետ կապը (ուշ անվանումներում՝ Մարիամ, Ֆաթիմա, պառավ, վիուկ և այլն), ինչպես տեսանք, ի հայտ է գալիս նաև այլուրեք:

Մարդուկի (այլ կերպ՝ Բել-Մարդուկ, Բել, այսինքն՝ «տեր») այս առասպելը հին հայոց մեջ համադրվել է Հայկի և Բելի առասպելի հետ, միայն փոխվել են հերոսների դերերը՝ որպես տիեզերածին աստված / հերոս հանդես է գալիս Հայկը, իսկ հակառակորդ հրեշի դերը անցել է Բելին¹⁷:

Հատկանշական են ծիածանի՝ ամպրոպի աստծու հետ կապված անվանումները՝ հնդ. «Բնդրայի աղեղ», «Բնդրայի գենք», սկանդինավ. «Թորի աղեղ», սաամ. «որոտի աղեղ», էստոն. «որոտի աղեղ/կամար», ֆինն. «Ուկկոյի աղեղ» և արաբ. «Կուզահի աղեղ» (Բնդրան, Թորը և Ուկկոն ամպրոպի աստվածներ են, նույնը և Կուզահը, որն իսլամում ձեռք է բերել «չար ոգի, շեյթան» իմաստը): Տարբեր ավանդույթներում ամպրոպի աստվածները հաճախ պատկերացվել են որպես նետաձիգներ, իսկ կայծակները նրանց արձակած նետերն են (հմմտ. օրինակ լիտվ. *Perkuno strelos*, ռուս. Перуновы стрелы «ամպրոպի աստծու նետեր» արտահայտությունները):

Հին հունական և լատինական ավանդույթներում հնդեվրոպական **dyeu-* *ph2ter-* երկնային հայր աստվածը յուրացրել էր նաև ամպրոպի աստծու գործառնությունը: Հնարավոր է, որ այդպես էր նաև հնագույն հայոց մեջ: Բնչնէ, հայոց նախաքրիստոնեական դիցարանի գերագույն աստված Արամազդը նույնացվել էր հունական ամպրոպային Ջևսի հետ, իսկ նրա պաշտամունքի կենտրոնը՝ Անի-Կամախը հնում եղել է Խեթական կայսրության ամպրոպի աստծու պաշտամունքի կարևոր կենտրոններից մեկը (Կումմախա)¹⁸: Ավելին, նա հիշվում է որպես «ամպրոպային» (Խորենացի, Բ.29), որով և նշանակալիորեն տարբերվում է իր հին իրանական նախատիպից՝ Ահուրա Մազդայից: Արամազդը համարվել է «արարիչ երկնի և երկրի» և «հայր դիցն ամենայնի» (Ագաթանգեղոս 68, 785): Արամազդը, որպես տիեզերքի արարիչ և մյուս աստվածների հայր համապատասխանում է Հայկին՝ հայոց տիեզերքի արարչին և հայոց առասպելական նախնիների հորը: Այսպիսով, Հայկը ժառանգն է հնագույն հայոց գլխավոր աստծու, որը, հավանաբար, իրանական ազդեցության դարաշրջանում, իր տեղը զիջել է Արամազդին:

Հայկը համեմատական առասպելաբանության համատեքստում ներկայացնում է հնդեվրոպական ամպրոպի աստծու կերպարը, որը շատ առումներով համապատասխանում է հնդկական Բնդրային և մյուս հիշյալ ամպրոպի աստ-

¹⁶ Հին միջագետքյան ծիածան-աղեղի վերաբերյալ այս համատեքստում տե՛ս S. Parpola. Monotheism in Ancient Assyria.— One God or Many? Concepts of Divinity in the Ancient World (Transactions of the Casco Bay Assyriological Institute 1). Casco Bay, 2000, p. 200. <http://www.betnahrain.org/bbs/index.pl/noframes/read/29162>.

¹⁷ Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Հայկ նահապետը համեմատական առասպելաբանության լույսի տակ. Ծնորի ի վերուստ. առասպել, ծես, պատմություն.— Հոդվածների ժողովածու նվիրված Մարգիս Հարությունյանի ծննդյան 80-ամյակին, Երևան 2008, A. Petrosyan. Forefather Hayk in the Light of Comparative Mythology. — Journal of Indo-European Studies. Vol. 37, 2009, 1–2:

¹⁸ Արամազդի և նրա պաշտամունքի կենտրոնի մասին տե՛ս Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Արամազդ. կերպար, պաշտամունք, նախատիպեր, Երևան 2006:

վածներին¹⁹: Այսպիսով՝ Հայկ նահապետի «լայնալիճ» աղեղը, որով նա նետահարում է իր հակառակորդ Բելին, կարող է պատկերացվել որպես հղված ամպրոպային աստվածությունների աղեղի մի գուգահեռ, այսինքն՝ ծիածան:

Ամպրոպի աստվածները, կարելի է ասել, նաև անձրևի և երկրի պտղաբերության աստվածներ են: Առասպելաբանության մեջ ամպրոպի աստծու՝ Օձվիշապի դեմ տարած հաղթանակից հետո ազատվում են ջրերը, անձրև է գալիս, պտղաբերում է երկիրը²⁰: Ծիածանը, որ հայտնվում է անձրևի վերջում, միանգամայն տեղավորվում է համապատասխան պատկերացումների համալիրի մեջ (հմմտ. և ծիածան-օձ լայնորեն տարածված պատկերացումը):

Գունային անվանումներ

Ծիածանի գույների հետ կապված պատկերացումները հետաքրքիր են ու բազմազան, թեև կարծես ոչ թե դրանք, այլ տիեզերական հսկայական կամար/աղեղ/գոտի ներկայացնող պատկերն է առասպելաստեղծ պատկերացումների հիմնական ոգեշնչողը: Ծիածանի գույները ներկայացնում են արևի ողջ անընդհատ սպեկտրը, որի բաժանումը որոշ թվով համասեռ գույների միայն կամայական է: Ներկայումս ամենուրեք տարածված է ֆիզիկայի դասագրքերից հայտնի «ծիածանի յոթ գույների» դրույթը, որը երկրորդային՝ «գիտական» առասպելաբանության մի դասական օրինակ է (ինքը՝ Նյուտոնը՝ այս յոթնագույն պատկերացման հիմնադիրը, սկզբնապես արևի սպեկտրը բաժանել է հինգ գույնի, և հետո միայն, յոթ թվի միաստիկայի ազդեցությամբ, ավելացրել ևս երկու գույն): Ընդհանրապես, «յոթ հիմնական գույների» դրույթը պատկանում է Արիստոտելին (*De sensu*, IV, 442): Իսկ ծիածանին Արիստոտելը վերագրել է երեք և միայն երեք գույն՝ մանուշակագույն / ծիրանի (կապույտ), կանաչ և կարմիր (*Meteorologica* III, 2. 371-372; 4. 374-375):

Ավանդական պատկերացումներում գույները և մասնավորապես ծիածանի գույները և նրանց քանակը ընկալվել և բնորոշվել են մեզանից տարբեր, բոլորովին այլ կերպ, ինչի արտացոլումն է հին կամ վաղնջական լեզուներում գույների շատ սահմանափակ քանակով անվանումները և դրանց ոչ միարժեքությունը: Օրինակ՝ ռուսական և իռլանդական հանելուկներում ծիածանը կարող է ներկայացվել որպես «կարմիր» («կարմիրը» ռուսերենում նաև «զեղեցիկ» իմաստն ունի): Հուներոսը նույնպես նկարագրում է ծիածանը որպես միագույն՝ *porphyreos* («Բլիական» XVII. 547. բառը թարգմանվում է որպես «ծիրանի», բայց հնում այն ունեցել է տարբեր՝ հիմնականում կարմրի երանգներ արտահայտող նշանակություններ և լայն օգտագործում է ունեցել՝ օրինակ, կիրառվել է ալեկոծ ծովը բնորոշելու համար՝ «Բլիական» I, 482): Արիստոտելյան եռագույն պատկերա-

¹⁹ Այս մասին տե՛ս A. Petrosyan. The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic. Washington 2002, ն ու յ ն ի՝ Հայկի և Բելի առասպելի հնդեվրոպական գուգահեռները. պատմական վերակազմություն. – ՊԲՀ, 2009, № 1, էջ 155-170, ն ու յ ն ի՝ Հայկ նահապետը համեմատական առասպելաբանության լույսի տակ. Շնորհ ի վերուստ. առասպել, ծես, պատմություն, էջ 10-18:

²⁰ Այս մասին տե՛ս հատկապես В. В. Иванов, В. Н. Топоров. Исследования в области славянских древностей. М., 1974:

ցումն անցել է միջնադար, կապվելով քրիստոնեական սուրբ երրորդության հետ: Նկատենք, որ սկանդինավյան «Կրտսեր Էդդայում» ևս ծիածանը համարվում է եռագույն: Իսկ վաղ միջնադարից արդեն ի հայտ է գալիս նաև քառագույն կոնցեպտը, կապված տիեզերքի չորս տարրերի, տարվա չորս եղանակների հետ (նույնը և իսլամում)²¹:

Հայոց մեջ, ինչպես տեսանք, ծիածանն ամենից հաճախ կոչվում է երկու գույների անվանումներով՝ սովորաբար կանաչ-կարմիր, երբեմն՝ կանաչ-կապույտ, ընդ որում, երբեմն հավելվելով գոտի և աղեղ անվանումներին (հմմտ. «ըդ գարմիր-գանանչ աղեղնուգ սուրպ Գարաբեդը կողին ը»)՝²²: Երբեմն այն կոչվել է մեկ գույնով՝ հմմտ. ծիրանի գոտի, ոսկու գոտի և կանաչ կապել «ծիածանել», ընդ որում, վերջին արտահայտությունը սովորական կանաչ-կարմիր կապելու կրճատ տարբերակը պիտի լինի: Հատկանշական է, որ երկնային աստվածը կարող է կոչվել ծիածանի գունային անվանումով՝ կանաչ-կապույտի աստված²³, ինչը համահունչ է ծիածանի՝ որպես աստծու ատրիբուտի պատկերացմանը:

Այդ կոչման մի լավ գուրգահեռ է ծիածանի հուն. «երկնքի գույներ» կոչումը. նույն շարքին է պատկանում նաև արդեն հիշյալ պրսկ. «գունավոր կամար / աղեղը»: Կանաչ-կարմիր կամ կապույտ-կարմիր գույներով է բնորոշվում ծիածանը նաև որոշ այլ ժողովուրդների մեջ (օրինակ՝ քրդեր, էստոնացիներ, չինացիներ): Նկատենք, որ այս գույները նաև համապատասխանում են Արիստոտելի առաջադրած երեք գույներին: Բայց ծիածանի՝ ուղղակի երկու գույների անվանումներով կոչելը չունի լայն գուրգահեռներ և առանձնահատուկ է (ինձ հայտնի միակ գուրգահեռը քրդական է՝ keskesor / käckäcor «կապտակարմիր», որը բացառիկ է իրանական լեզուներում և թերևս պատճենված է հայերենից): Այս անվանումը նկարագրական է, ավանդված համեմատաբար ուշ, և, ինչպես ցույց է տալիս գուրգահեռների բացակայությունը, ոչ այնքան հին:

Բալկաններից մինչև Կովկաս լայնորեն տարածված են ծիածանի գույների և տարբեր երկրագործական մշակույթների համադրությունը և ծիածանի միջոցով բերքը կանխատեսելու պատկերացումները: Այսպես՝ հարավային սլավոնների մեջ կանաչը կարող է կապվել խոտի, հացահատիկի, դեղինը՝ կորեկի, եգիպտացորենի, կարմիրը՝ գինու, խաղողի հետ և այլն: Ծիածանի որ գույնն ավելի լայն է, այդ գույնին համապատասխան բերքն էլ առատ կլինի: Այս համատեքստում ծիածանի ամենագեղեցիկ անվանումներից մեկն է մակեդոնական և բուլղարական (բրբռ.) виножито-ն «գինի + հաց / հացահատիկ», որը հայկական կանաչ-կարմիրի մի բանաստեղծական համապատասխանությունն է (գինին խորհրդանշում է կարմիրը, հացահատիկը՝ կանաչը): Կովկասում ծիածանի գույները հաճախ կապվում են՝ կանաչը՝ բերքի (հացահատիկի), կարմիրը՝ խաղողի, գի-

²¹ Չորս գույների համադրությունը չորս տարրերի և չորս բարոյական հատկանիշների հետ ներկայացնում է և Գրիգոր Տաթևացին, տե՛ս Գ Ր Ի Գ Ո Ր Տ ա թ և ա ց ի. Գիրք հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1829, էջ 212, 297:

²² Ա. Հ ա ն է յ ա ն. «Ծիածան» հասկացության բառագուգարանությունների լեզվաաշխարհագրական բնութագիրը և հոգևոր մշակութային արժեքը, էջ 90:

²³ Այս անվանումները տե՛ս Ա. Մ ու ը ք ի ա ս յ ա ն, Ս. Գ ա լ ս ո յ ա ն. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1976, էջ 311-312:

նու, պատերազմի, կապույտը՝ անձրևների հետ և այլն²⁴: Հայոց մեջ (Վարանդա-
յում) գրանցված է հետևյալ գուշակությունը. եթե ծիածանի դեղին գույնն է գերիշ-
խում՝ շատ կլինեն հիվանդությունները, կանաչը՝ առատ կլինի ցորենը, կարմի-
րը՝ գինի²⁵: Սա կարող է առնչվել Տիր աստծու՝ «երազացոյց երազահան» կո-
չումների (Ազաթանգեղոս, 778), այսինքն՝ երազների միջոցով գուշակելու գոր-
ծառության հետ²⁶:

Բազմագույն և փայլող երևույթները և նյութերը հնուց ի վեր համեմատվել են
ծիածանի հետ²⁷: «Կանաչ-կարմիրը» հայոց մեջ տոնականության, գեղեցկության,
գուզվածության հոմանիշ է²⁸, որի ավելի ընդհանուր նշանակությունն է «գույնզ-
գույն, բազմագույն»: Մյուս կողմից, կանաչ-կարմիրը ամուսնության գունային
սիմվոլն է: «Կանաչ-կարմիր(ը) կապել» ասում են և՛ ծիածանի հայտնվելուն, և՛
ամուսնանալուն կամ երեխային ամուսնացնելուն²⁹: Այդ գույներն էական դեր են
կատարում հայկական հարսանեկան ծեսի սիմվոլիկայում, և ժողովրդական
պատկերացումներում ծիածանը պիտի կապվեր ամուսնության հետ: Այդ գույ-
ների էր լինում հարսանեկան նարոտը (հարսի և փեսայի վզին կամ գլխին կապ-
վող հյուսված թելեր) և ուսկապը կամ կոսրանդը (փեսայի ուսերից մինչև գոտին
խաչաձև կապվող երկու ժապավենները)³⁰: Նարոտը և ուսկապը, դատելով ազ-

²⁴ Այս մասին տե՛ս Ю.Е. Березкин. Նշվ. աշխ., 46B:

²⁵ Ե. Լ ա լ ա յ ա ն. Վարանդա. – «Ազգագրական հանդես», գ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 221:

²⁶ Գ. Ք ո չ ա ը յ ա ն. Տիր / Տիր աստվածությունը «Հայոց մեծաց» սերնդաշարքում. – ՀՀ ԳԱԱ
«Լրաբեր հասարակական գիտությունների», 2005, № 1, 132-136:

²⁷ Այս առթիվ արժե անդրադառնել թանկարժեք քարերի «ծիածանային» բնութագրին:
Ադամանդի մասին Հաֆիզն ասել է՝ «Ծիածանն է պարփակված նրա մեջ հավերժ»: Այս
արտահայտությունը կարելի էր ասել ոչ միայն ադամանդի, այլև մյուս բազմագույն փայլփող
քարերի մասին (հմտ. օրինակ պրսկ. sawesa «ծիածան» և sawishim «կանաչ քար, ազաթ»):
Պարսկական մի պատկերացման համաձայն, ծիածանը արտացոլում է յոթնազազաթ լեռների,
որոնցից ամեն մեկը մի ուրույն գույնի թանկագին քարից է: Հին չինական պատկերացումների
համաձայն ծիածանը կապվում է Նուվա դիցուհու հետ, որն օգտագործում է հինգ տարբեր
գույների քարեր: Ժամանակակից միջազգային տերմինաբանության մեջ ևս մի շարք (թանկարժեք)
քարերի տեսակների ուղղակի տրվում է «ծիածանային» բնորոշումը (տոպազ, օպալ, շպատ,
օբսիդիան): Հիշենք, որ «Գիլգամեշում» Բշտարի լազուրե մանյակը համեմատվել է ծիածանի հետ:
Հունական առասպելաբանության մեջ Բրիսը՝ ծիածանի աստվածուհին, դուստրն է ծովային
աստված Թավմասի և օվկիանուհի Էլեկտրայի, որի անունը նշանակում է «սաթ» (այսինքն՝
կարելի է ենթադրել, որ ծիածանը պարփակված է համարվել սաթի մեջ և ծնվել է սաթից): Հայոց
մեջ սաթի հետ կապված առասպելաբանական անուն է Սաթենիկը (նրա անվան այս
ստուգաբանության մասին տե՛ս Т. Д а л а л ы а н. On the Character and Name of Caucasian Satana
(Sat' enik). – Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, 2006, 1; Ա. Պ է տ ը ն ա յ ա ն.
Հայկական և հյուսիսկովկասյան նարթական էպոսների հարաբերությունը. – Հայկական «Մասնա
ծներ» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը III, տպագրության ընթացքում):
Սաթի համար ևս բնութագրական է եղել բազմագույն լինելը՝ հմտ. նրա բնորոշումը՝ Նոր
հայկազյան բառարանում՝ «բազմագույնի ակն»: Բսկ օտերենի մի բարբառում ծիածանը կապվում է
հայկական Սաթենիկի օսական կրկնակ Սաթանայի որդու՝ Սոսլանի անվան հետ:

²⁸ И. А. О р б е л и. Фольклор и быт Мокса. Ереван, 1982, с. 38.

²⁹ Ա. Ս ո ը թ ի ա յ ա ն, Ա. Գ ա լ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 311-312. Հայոց լեզվի բարբառային
բառարան. հ. Գ, Երևան, 2004, էջ 32:

³⁰ Նարոտի և ուսկապ / կոսրանդի մասին տե՛ս Г. А. Ш а г о я н. Инварианты и трансформация
в армянской свадьбе. Дис. на соискание ученой степени канд. историч. наук. Ереван, 2009

գագրական նյութից, հնում անպայման կանաչ-կարմիր չեն եղել, բայց շեշտվել է նրանց բազմագույնությունը (ինչպես ծիածանն է): Ըստ երևույթին, կանաչ-կարմիր գույները ընդհանրացել են հենց ծիածանի նույնական անվան հետ համադրելու ձգտմամբ: Հետագայում նրա երկու գույները, որոշ դեպքերում, կարծես սկսել են խորհրդանշել հարսին ու փեսային:

Ուսկապը, ինչպես ցույց է տալիս անվանումը, «ուսի կապ» է: Նույն գաղափարն է կրում և կոսբանդը, որը «բանդ են անում», այսինքն՝ կապում են³¹: Ուսկապը, որը բաղկացած է լինում երկու՝ կանաչ և կարմիր թաշկինակներից կամ ժապավեններից, կուրծքը և մեջքը բոլորող խաչաձև մի գոտի է, որը հնում այլ կերպ ասվել է և խաչ-գոտի (տե՛ս ստորև): Այդ գոտին են կապում հարսանիքի ժամանակ, և «կանաչ-կարմիր կապել» արտահայտությունը ծիածանի վերաբերյալ նշանակում է, որ երկինքն է հարսանեկան ուսկապ՝ կանաչ-կարմիր գոտի կապել:

Ըստ մի հայկական լեզվագիտի, գրանցված Ղարադաղում, ուսկապ/կոսբանդը հենց ծիածանի սիմվոլն է (ծիածանն էլ կապվում է աստծու և աշխարհի հետզոր-հեղեղյան ուխտի հետ)³²: Նույն գույներն են երգվում հարսանեկան երգերում (օրինակ՝ հիշվում են կարմիր սուլերն ու կանաչ արևը, կամ կանաչ արևն ու կարմիր վարդը և այլն)³³: Ծիածանի՝ տիեզերական գոտու և ամուսնության այս առնչությունը ցույց է տալիս, որ մենք գործ ունենք առասպելաբանության մեջ գլխավոր՝ երկնքի և երկրի «սրբազան հարսանիքի» առասպելի հետ, որով սկսվում է տիեզերքի արարումը³⁴ (տե՛ս ստորև):

Սահմանափակ տարածում ունեցող անվանումներ

Մրանցից առաջինն անդրադառնանք օրոտիկ կոչմանը: Բնչպես տեսանք, ծիածանի հետ կապված բազմաթիվ պատկերացումներ առնչվում են երկնային ամպրոպի աստծու կերպարին, որն ավելի ճշգրիտ կերպով կարող է կոչվել կայծակի, որոտի և անձրևի աստված: Հենց այդ աստծու բնութագրական մի հատկանիշի՝ որոտի նվազական/քնքշական անվանումն է օրոտիկը: Որպես գուգահեռ նշենք էստոներենի լիվյան (լիվոնյան) բարբառով *pit'kiz kor* «որոտի աղեղ» ձևը:

(рукопись), с. 29–34, համապատասխան գրականության հղմամբ. հայկական տարագրում գունային ավանդական պատկերացումների վերաբերյալ՝ Ա. Մ տ է փ ա ն յ ա ն. Հայոց տարագանախշերի գունային համակարգը և ժողովրդական գունընկալումը.– «Հանդես ամսօրյա», 2001, էջ 477–500. տե՛ս և Ա. Մ ու շ է ղ յ ա ն. Նարոտի խորհուրդը կամ ծեսի վերականգնման ուրվագիծ.– «Էջմիածին», 1997, Ը-Թ, էջ 88–93:

³¹ Հայոց լեզվի բարբառային բառարան. հ. 9, էջ 153:

³² Հ. Հ ո վ ս է փ յ ա ն. Ղարադաղի հայերի ազգագրությունը (ըստ Լիսիցյանի հարցարանի), գիրք 2, Երևան, 1985, էջ 86–92:

³³ Ա. Մ տ է փ ա ն յ ա ն. Հայ ժողովրդական տարագի զարդանախշերը (ծխային, գունային և նշանային համակարգեր).– Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 22, Երևան, 2007, էջ 32:

³⁴ Այս մասին տե՛ս Գ. Ա. Л е в и н т о н. Священный брак.– Мифы народов мира, т. 2, с. 422–423:

Ծովյանը *հայոց մեջ տարածված մի դիցանվան՝ Ծովինարի տարբերակներից մեկն է: Վերջինս կանացի ամպրոպային մի կերպար է³⁵, որն էպոսում հանդես է գալիս երկվորյակներ Սանասարի և Բաղդասարի մայր: Ընդ որում, Սանասարն ինքը, «կայծակե թրի» առաջին տերը, ամպրոպի հին աստծու վիպական ժառանգն է³⁶: Բացի այդ, Ծովյանը և Ծովինարը, որպես հասարակ անուններ, նշանակում են ուղղակի «փայլակ, կայծակ»: Հատկանշական է, որ էպոսում Սանասարը կոչվում է «ծովային», որով ուղղակի համապատասխանում է հնդկական ամպրոպային Բնդրայի «ջրային» կոչմանը: Ծիածանի՝ Ծովյան կոչման լավագույն մի զուգահեռ հանդես է գալիս հարավսլավոնական՝ սերբախորվաթական և բուլղարական ավանդություն, որտեղ, ինչպես տեսանք, ծիածանը ներկայացվում է որպես «Մարիայի գոտի»: Բայց այս Մարիան, անունով՝ քրիստոնեական Աստվածամայրը (երբեմն՝ Մարիամ Մագթադինացին), Օգնյենա Մարիան է (բուլղար. Օգնյանա Մարիա)՝ «Հրեղեն Մարիամը», որը բանահյուսության մեջ պարզորոշ կերպով հանդես է գալիս որպես ամպրոպային դիցուհի, ամպրոպի աստծու կին³⁷: Ծիածանի այս անվանումն ունի զուգահեռներ քրիստոնեական աշխարհում և նույնական է հայկական Մարիամ գոտի ձևին:*

Նկատենք, որ որպես ծիածանի հետ նույնացվող դիցուհի, Ծովյանը, հին միջագետքյան համատեքստում, համապատասխանում է Բշտարին:

Յեղյակ (կարդա՛ եղյակ) ձևը, արձանագրված Մոկսում և Շատախում, համապատասխանում է նույն շրջանի բարբառներում սուրբ Եղիայի՝ ամպրոպի աստծու քրիստոնեական ժառանգի անվանը՝ Եղյակ³⁸: Ըստ Ա. Հանեյանի, աղեղնեակ-ի ձևափոխությունն է, բայց իրականում՝ ոչ այնքան սպասելի մի ձև: Ըստ այդմ, այն կարող է բացատրվել նաև ուղղակի որպես Եղիա, կամ, ավելի շուտ, աղեղնեակ և Եղիա/ Եղյակ անունների բաղադրություն: Հատկանշական է, որ Աբխազիայում, որտեղ մինչև վերջերս պահպանվել էին ծիածանի աստծուն նվիրված ծեսերը, այդ աստվածը որոշ տեղերում կոչվել է áć°aq°a-Elia «ծիածան-Եղիա»:

Անձրևի հարս անվանումը միանգամայն համապատասխանում է նախորդին: Կանացի ամպրոպային կերպարները, խոր վերակազմության մեջ, համապատասխանում են ամպրոպի (և անձրևի) աստծու կնոջը: Ուրեմն, «անձրևի հարսը» համապատասխանում է Ծովյանին: Այս առումով հետաքրքիր է քրդական / եզդիական «երկնքի հարս» զուգահեռ ձևը: Լիտվական ավանդության մեջ ծիածանը կոչվում է «Լաուսեի գոտի», իսկ Լաուսեն, կամ հենց Վայվա «ծիածանը», ամպրոպի աստծու հարսնացուն է, որին փախցնում է աստծու հակառակորդ չար ոգի Վելնիասը³⁹:

³⁵ Մ. Ա. Բ. Ե. Ղ. Մ. Ե. Երկեր, հ. Ե, Երևան 1975, էջ 70-72:

³⁶ Նույն տեղում, էջ 72-73:

³⁷ А. Н. Афанасьев. Նշվ. աշխ. էջ 155-156, В. В. Иванов, В. Н. Топоров. Նշվ. աշխ., էջ 198-199:

³⁸ Եղիա-Եղյակի վերաբերյալ այդ համատեքստում տե՛ս Մ. Ա. Բ. Ե. Ղ. Մ. Ե. նշվ. աշխ., էջ 69-70:

³⁹ В. В. Иванов, В. Н. Топоров. Նշվ. աշխ., էջ 25, Мифы народов мира, т. 2, с. 40.

Աղավնի / աղավնիկ *անվանումը, ակնհայտորեն, քրիստոնեական-աստվածաշնչյան ծագում ունի: Աստվածաշնչյան ավանդության մեջ, ինչպես տեսանք, ծիածանը կապվում է Նոյի և ջրհեղեղի առասպելի հետ: Ջրհեղեղի ավարտին Նոյը երեք անգամ ուղարկում է աղավնուն պարզելու, թե ջրերը քչացել են, թե ոչ: Առաջին անգամ աղավնին գալիս է ձեռնունայն, երկրորդին՝ ձիթենու մի տերև կտուցին, իսկ երրորդ անգամ չի վերադառնում՝ ջրերը լրիվ իջել էին: Այս կոչումը ստեղծված է հետևյալ մտայնությամբ՝ ծիածանի հայտնվելը խորհրդանշում է անձրևի ավարտը:*

Քրիստոնեության մեջ աղավնին հանդես է գալիս որպես սուրբ երրորդության երրորդ անդամի՝ սուրբ հոգու սիմվոլ: Վերնում նշվեց, որ այս երրորդությունն առնչվել է եռագույն սխեմայի գաղափարին, և աղավնին, բացի իր առաջնային՝ Նոյի աղավնու հետ ունեցած առնչությունից, ժողովրդական ընկալումներում կարող էր առնչվել սուրբ հոգու և սուրբ երրորդության հետ: Ընդհանրապես, աղավնու անվանումը կարող է ինչ-որ կերպ կապված լինել գույնի հետ, հմմտ. օրինակ՝ ռուս. голубь «աղավնի», голубой «երկնագույն, կապույտ», պրսկ. kabutar «աղավնի» և kabūd «կապույտ» և այլն⁴⁰: Հենց աղավնի բառն էլ, հնարավոր է, ծագում է հնդեվրոպական «սպիտակ» արմատից⁴¹:

Կամար անվանումը նկարագրական է և, բացի այդ, ներկայացնում է աստուածակամար անվանման կրճատ ձևը (հմմտ. գոտի և աստծու գոտի): Ընդ որում, առաջնայինն այստեղ հավանաբար կամար «գոտի» բառն է, որը բաղադրվել է (խառնվել) է ստուգաբանորեն տարբեր, բայց նման նշանակությամբ կամար «շինության աղեղնաձև ճակատ» բառին, հմմտ. երկնակամար:

Նշանակ ձևի համար հիշենք, որ Աստվածաշնչում ծիածանը որպես աստծու և աշխարհի միջև աշխարհն այլևս ջրհեղեղով չկործանելու ուխտի նշան է ներկայացվում, ընդ որում, հայերեն թարգմանության մեջ օգտագործվում է նշանակ տերմինը՝ «Ջաղեղն իմ եղից յամպս, և եղիցի ի նշանակ յավիտենական ուխտին ընդ իս և ընդ ամենայն երկիր»: Դժվար է ասել, թե Ակնում այս անվանումն ինչքանով է ժողովրդական կիրառություն ունեցել: Ակնհայտ է, որ այն ծագում է Աստվածաշնչից և հին, ժողովրդական արմատներ չունի: Որպես գուգահեռ հիշենք ռուսական և ուկրաինական знаменье господне, божий знак, знамя ձևերը⁴²:

Ծիրանի գոտի ձևն առնչվում է, առաջին հերթին, ծիրանի գույնի հետ, որը ոչ միայն ծիրան պտղի գույնն է, այլ ներառում է նաև այլ նշանակություններ՝ համապատասխան հատկապես հուն. porphyreos «մուգ կարմիր, բուսր», երբեմն՝ «յասամանագույն-կարմիր, մանուշակագույն» (հմմտ. ռուս. пурпурный) բառին: Հիշենք, որ Հովերոսը ծիածանը այս գույնի է համարում: Նոր հայկազյան բարարանն էլ ծիրանի գույնի համար ներկայացնում է բազում իմաստներ՝ կարմրից մինչև մանուշակագույն, այսինքն, ծիածանի համարյա ողջ գունաշարը: Ինչևէ, ծիածանի՝ երկնային էության պարագայում, այս գույնն առնչվում է երկնային ծիրանի ծովի պատկերացման հետ: Դա ամպրոպային աստծու և նրա հակառ-

⁴⁰ М. Ф а с м е р. Этимологический словарь русского языка, т. 1. М., 1986, с. 433.

⁴¹ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Երևան, 1987, էջ 270:

⁴² [http://www.wikiznanie.ru/ru-wz/index.php/Радуга_\(в_славянской_мифологии\)](http://www.wikiznanie.ru/ru-wz/index.php/Радуга_(в_славянской_мифологии)).

ակորդի կովի «մարտադաշտն է, երկնքի ու երկրի միջև ընկած տարածությունը, տեսանելի ջրային երկինքը», որը կոչվում է նաև արյունակարմիր, արյուն ծով⁴³: Այս ծով ծիրանին նաև ուղղակի Օռվինարի անագրամն է՝ Օռվինարը մարմնավորում է այդ երկնային ծիրանի ծովը⁴⁴: Այսինքն՝ անկախ իր պարզորոշ գունային, նկարագրական թվացող իմաստից, այս անվանումը կապված է հին՝ ժողովրդական տիեզերաբանական պատկերացումների հետ:

Օսգու գողի («ոսկե գոտի»), ամբի գողիկ («ամպի/երկնքի գոտի») և էրգան գողի («երկայն գոտի») ձևերը նկարագրական են և շատ բան չեն ավելացնում նյութին: Միրական գոտին, հավանաբար, հին, անհասկանալի դարձած Տիրական գոտու վերաիմաստավորումն է:

Կենդանական սիմվոլի հետքեր

Ըստ Մ. Ալինեի, ծիածանի անվանումները Եվրոպայում և հարակից տարածքներում բաժանվում են երևույթի՝ հմայա-կրոնական ընկալման երեք խմբերի՝ քրիստոնեական կամ իսլամական, նախաքրիստոնեական կամ նախաիսլամական՝ երկու դեպքում էլ կապված որևէ մարդակերպ էության (աստծու, սրբի) հետ և հեթանոսական, ներկայացված կենդանական կերպարով⁴⁵: Հայկական անվանումները, ինչպես տեսանք, բացահայտում են հնագույն առասպելաբանական պատկերացումների և ժողովրդական ընկալումների մի շերտ, որը շատ ընդհանրություններ ունի այլ, հատկապես եվրոպական քրիստոնյա ժողովուրդների համապատասխան պատկերացումներում և անվանումներում: Եթե հաշվի չառնենք աղավախ ձևը, որն ակնհայտորեն երկրորդային, ուշ մի անվանում է, ապա կարելի է ասել, որ անունների մակարդակում հետքեր չեն երևում միայն այլուրեք լայնորեն ավանդված այն առասպելի, որի համաձայն ծիածանը պատկերացվել է որպես մի հսկայական կենդանի, հաճախ օձ, որը ջուր է խմում երկրից և ի վերջո այն ետ վերադարձնում անձրևի տեսքով (եվրոպական ժողովուրդների մեջ որպես այդպիսի կենդանիներ հիշվում են աղվեսը, եզր, կովը, ձին, «աստվածային կենդանին», կետը կամ դելֆինը, կզաքիսը. իսկ օձ-ծիածանը, ինչպես ասվեց, հայտնի է ողջ աշխարհում և հատկապես Ավստրալիայում, ուր հանդես է գալիս որպես տեղի վաղնջական ցեղերի ամենակարևոր դիցաբանական կերպար)⁴⁶:

Ծիածանի կենդանական պատկերացումը նույնպես խորթ չէ հայկական ավանդույթին: Որոշ հանելուկներում ամպի կամ ծիածանի մասին ասվում է, որ այն մի տեղ նստում կամ չոքում է, իսկ մի այլ, հեռու տեղում, ջուր խմում: Մի

⁴³ Մ. Աբեդյան. նշվ. աշխ., էջ 66:

⁴⁴ Երկնային ծիրանի ծովի մասին տե՛ս Մ. Աբեդյան. նշվ. աշխ., հ. Է, էջ 65-66, հ. Ը, երևան 1985, էջ 111. Օռվինարի՝ ծիրանի ծովի անձնավորումը լինելու վերաբերյալ՝ Մ. Հ ա ղ ո ղ յ ա ն. Հայ առասպելաբանություն, էջ 83, А. Е. П е т р о с я н. Армянский эпос и мифология. Ереван, 2002, с. 16, 19:

⁴⁵ M. A l i n e i. նշվ. աշխ.:

⁴⁶ Ю. Е. Б е р е з к и н. նշվ. աշխ., 41, M. A l i n e i, նշվ. աշխ., В. В. И в а н о в, В. Н. Т о п о р о в. նշվ. աշխ., էջ 146. Ավստրալիական նյութի վերաբերյալ՝ С. В е r n d t. Rainbow Snake. Encyclopedia of Religion (2nd ed.), vol. 11. New York, London, 2005, p. 7605-7608:

հանելուկում ամպը և որոտը ներկայացվում են որպես կով, որը «կաթնաղբյուր- են ջուր կխմա, արյուն ծովեն ձեն կհանա» (նման պատկերներ կան նաև որոտի և կայծակի վերաբերյալ. հանելուկների պատասխանները, ինչպես հաճախ է լինում, միարժեք չեն): Արյուն ծովի «կովը» պիտի ներկայացնի «արյուն» կամ «ծիր- անի ծովի» ամպրոպային կերպարի՝ Ծովինարի կենդանական սիմվոլը, որը ջուր է խմում երկրից և, որոտալով երկնքում, անձրև առաջացնում (ամպրոպային աստվածությունների սովորական սիմվոլն է ցույր, իսկ նրա կնոջը՝ կովը, և մի հանելուկում կայծակը պատկերացվում է հենց որպես կարմիր եզ)⁴⁷: Ամպրոպային Ծովինարն է, որ կաթնաղբյուրից ջուր խմելով հղիանում է Սանասարով և Բաղդասարով և նրա տարբերակ Ծովյանն է, որը հանդես է գալիս որպես ծիածանի անձնավորում: Նրա սիմվոլն է, այդպիսով, կովը:

«Սրբազան հարսանիք»

Առասպելը վաղնջական մտածողության մեջ իրենում ամփոփում է այն սրբազան նախադեպը, որի հետևանքով և որին կրկնելով է ձևավորվում տիեզերքի և հասարակության ընթացիկ վիճակը⁴⁸: Ընդհանրապես տիեզերածնության և նրան առնչվող առասպելներն են կազմում այն հիմնական նախադեպերը, որոնց հետևում են մնացած բոլոր (համապատասխան) երևույթները, ինչպես բոլոր արարումները՝ առաջին արարմանը, բոլոր մահերը՝ առաջին մահվանը, բոլոր հարսանիքները առաջին՝ «սրբազան հարսանիքին» և այլն: Առասպելաբանական պատկերացումներում տիեզերական սրբազան ամուսնությունը պարբերաբար (ցիկլիկ կերպով) վերարտադրվում է այնպիսի բնական երևույթներում, ինչպիսիք են, ասենք, անձրևը և կայծակը, որոնք առաջացնում են (արարում են) արդեն ոչ թե ողջ տիեզերքը, այլ պարբերաբար վերարտադրվող երևույթները և բարիքները (օրինակ՝ հացահատիկը): «Գանաչ-կարմիր» ծիածանը խորհրդանշում է երկնքի և երկրի պարբերաբար կրկնվող սրբազան հարսանիքը, որին ուղեկցող անձրևը խորհրդանշում է երկնքի կողմից երկրի բեղմնավորումը: Դիցարանական՝ աստվածային մակարդակում այդ երևույթը ներկայացվում է երկնքի աստծու և նրա կնոջ՝ երկրի աստվածուհու հարսանիքի առասպելով:

«Սրբազան հարսանիքի» հետ են առնչվում ծիածանի՝ ոչ միայն արդեն քննարկված կանաչ-կարմիր, այլև մյուս անվանումները: Այսպես, աղեղը, ի թիվս այլոց, նաև սիրո աստվածների՝ հուն. Էրոսի և հնդ. Գամայի զենքն է: Աղեղի այս հատկանիշը վառ արտահայտվում է հարսանեկան ծիսակարգում: Աղեղը և նետը (վերջինս իբրև ֆալլիկ սիմվոլ), հանդես են գալիս, համապատասխանաբար, որպես սրբազան ամուսնությամբ միացած մայր հողի և հայր երկնքի ծիսական-առասպելաբանական փոխաբերություն⁴⁹: Այս համատեքստում պետք է

⁴⁷ Այս հանելուկները տե՛ս Ս. Հ ա ղ ո թ յ ո լ ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 11-16. ցուլի՝ որպես ամպրոպի աստծու սիմվոլի վերաբերյալ՝ Мифы народов мира, т. 1. М., 1980, с. 203:

⁴⁸ Այս հարցերի վերաբերյալ տե՛ս հատկապես M. E l i a d e. Cosmos and History. New York, 1959:

⁴⁹ Мифы народов мира, т. 2. М., 1982, с. 75. Նետահարելը որպես սեռական գործողություն ընկալելու վերաբերյալ, ընդ որում Հայկի ու Բելի հետ առնչվող առասպելների շրջանակում, տե՛ս Ս. Պ ե տ ղ ո լ ն յ ա ն. Գինը և տղամարդը հնագույն հայկական առասպելներում (տպագրության ընթացքում): Համանման պատկերացումները լայնորեն հայտնի են այլուրեք:

դիտվեն նաև ծիածանի անձրևի հարս և Ծովյան անվանումները: Կայծակը և նրան ուղեկցող ամպրոպն ու անձրևը խորհրդանշում են ոչ միայն սրբազան հարսանիքը, այլև սեռական գործողությունը, որտեղ Ծիածան-Ծովյանը ամպրոպի աստծու կին/սիրուհին է (Ծովինարը հղիանում է կաթնաղբյուրից ջուր խմելով, ինչն անում է և հանելուկում որոտի և ամպի հետ առնչվող կովը):

Մեզ հասած հայկական ավանդությունն առաջին անգամ առասպելական կապեր ունեցող ամուսնության մասին պատմվում է Արտաշիսյան արքայատոհմի դարաշրջանին վերաբերվող «Վիպասանք» էպոսում: Հայոց Արտաշես արքան Կուրի մյուս ամպից փախցնում է ալանների արքայադուստր Սաթենիկին և ամուսնանում նրա հետ: Եվ Գողթան երգիչները երգել են՝

Տեղ ոսկի տեղայր ի փեսայությանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն (Խորենացի, Բ.Ծ):

Սա, ակնհայտորեն, «սրբազան հարսանիքն» ուղեկցող «սրբազան անձրևի» թեման է, որը շարունակվում է տարբեր ժողովուրդների՝ այդ թվում և հայոց կենցաղում մինչև մեր օրերը (հմմտ. հարսի և փեսայի վրա վարդաջուր, հատիկներ և փող տեղալը)⁵⁰: Ընդ որում, ոսկե անձրևը ուղղակի նույնական է Ջեսի՝ ոսկե անձրևի տեսքով Դանայեին հղիացնելու առասպելին (ինչի հետևանքով ծնվում է Պերսևսը):

Իսկ կապ ունեն այստեղ աղեղն ու նետը: «Վիպասանքի» ալանական արքայադուստր Սաթենիկը համապատասխանում է ալանների հետնորդների՝ օսերի և մյուս կովկասյան էպոսների Սաթանա/Սաթանեյին, որի մասին պատմում են հետևյալը: Անդրաշխարհիկ կերպարը գետի մյուս ամպից իր «նետն է արձակում» Սաթանայի կողմը: Ընդ որում, «նետի» թռիչքը ներկայացվում է որպես կայծակի հարված, որն ուղեկցվում է սև ամպով, մթնելով և որոտով⁵¹: Այդ «նետից» հերոսուհին (կամ նրա կողքի քարը) հղիանում է և արդյունքում ծնվում է էպոսի մեծ հերոսը (աղբղակա Մոսրուկոն, օսական Մոսլանը, արխազական Մասրրկվան և մյուսները՝ «Վիպասանքի» Արտավազդի կրկնակները):

Օսական ավանդությունն ևս Սաթանայի ամուսնությունն է, որ հանդես է գալիս որպես առաջին՝ «սրբազան հարսանիք» (հարսանիքի ժամանակ ասում են՝ «ծերանաք (համաձայնության մեջ – Ա. Պ.) ինչպես Ուրրզմագն ու Սաթանան»)՝⁵²: Եվ հատկանշական է, որ ծիածանը կապվում է այդ ամուսինների՝ «քարից

⁵⁰ Այս հարցի վերաբերյալ տե՛ս Մ. Արդյանի. Երկեր, հ. Ը, Երևան, 1985, էջ 172, Գ. Ա. III а г о я н. Армянский царь Арташес и аланская царевна Сатеник: мифологема священного брака в «Истории Армении» Мовсеса Хоренаци.– Археология, этнология и фольклористика Кавказа. Эчмиадзин, 2003, с. 339–342.

⁵¹ Այս մասին տե՛ս Վ. Գ. Արդյանի. Нартский сюжет о рождении героя из камня. Древняя Анатолия. М. 1985, с. 139, 162, прим. 12:

⁵² В. И. Абаев. Нартовский эпос.– Известия северо-осетинского научно-исследовательского института, т. X, вып. I. Дзауджискау, 1945, с. 37.

ծնված» որդի Սոսլանի անվան հետ (դիզորական բարբառով՝ Soslani ænduræ «Սոսլանի աղեղ»)՝⁵³:

Գոտին աշխարհի ժողովուրդների պատկերացումներում նույնպես կապված է ամուսնության, սեռական ակտիվության և պտղաբերության հետ: Հարսանեկան ծեսերում գոտի կապելը և արձակելը հարսին և փեսային տալիս էին ամուսնական հարաբերությունների մեջ մտնելու իրավունք: Հարսի և կնոջ գոտին կապելուն երեխա, հատկապես տղա բերելու հատկանիշ է վերագրվում⁵⁴: Փեսայի ամուսնական ծեսի հիմնական ատրիբուտներից ուսկապը կամ կոսբանդը հենում կոչվել է նաև խաչ-գոտի⁵⁵: Եվ իրոք, ի նչ է կանաչ-կարմիր ուսկապը, եթե ոչ լանջագոտի, այսինքն՝ գոտու մի տարատեսակ: Եվ այս գոտին է, որ առավել քան այլ, սովորական գոտիները, ուղղակի կապված է հարսանեկան ծեսի, սեռական և պտղաբերության ակտիվության հետ: Այսինքն՝ ծիածանի կանաչ-կարմիր գոտի անվանումն ուղղակի նույնացնում է այն հարսանեկան խաչաձև կապված կանաչ-կարմիր ուսկապ / խաչ-գոտու հետ: Միայն այս դեպքում խոսքը վերաբերում է տիեզերական «սրբազան հարսանիքին», ուր հարսը և փեսան տիեզերական, դիցաբանական կերպարներ են:

Թերևս արժե ավելացնել, որ քրիստոնեական աշխարհում այլուրեք ևս ծիածանը կարող է առնչվել պտղաբերության հետ. հմմտ. հետևյալ արևմտաբուլղարական լեզենդը՝ «Աստված ասաց Եվային՝ քանի կա ծիածանը, մարդիկ կբազմանան, իսկ երբ այն անհետանա՝ կգա երկրորդ հայտնությունը»⁵⁶:

Արևմաղ

Ծիածանը հաճախ երևում է արևմաղին՝ արև ժամանակ անձրևելիս (երբ արևը բավական՝ 42 աստիճանից ցածր է), իսկ այդ եղանակի համար աշխարհի ժողովուրդների մեջ բազում իրար նման անվանումներ կան⁵⁷: Առավել տարածված են հետևյալ երկու տիպերը՝ 1) «ինչ-որ կենդանու հարսանիք»՝ առաջին հերթին՝ աղվեսի (նկատենք, որ «աղվեսը» կապվում է ծիածանի հետ, օրինակ, այբանական, լիտվական, գերմանական, իտալական և բելոռուսական բարբառներում), ապա՝ շնագայլի, արջի, կապիկի, առնետի, առյուծի, փղի, վագրի, ընձառյուծի, բորենու, ագռավի և այլն, և 2) (չար) ոգիների հարսանիք: Ընդ որում, «աղվեսի հարսանիքը» տարածված է Եվրոպայում, Աֆրիկայում և Ասիայում, Բրիտանիայից մինչև Ճապոնիա: Շատ սահմանափակ լեզուներում՝ բասկերի,

⁵³ Ж. Д ю м е з и л ь. Скифы и нарты. М., 1990, с. 83, В. И. А б а е в. Историко-этимологический словарь осетинского языка, т. III. Л., 1979, с. 138.

⁵⁴ Հայկական ավանդական պատկերացումներում և հարսանեկան ծեսերում գոտու սիմվոլիկայի վերաբերյալ տե՛ս Ա. Մ տ է փ ա ն յ ա ն. Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը (ծիսային, գունային և նշանային համակարգեր). Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ. հ. 22, Երևան, 2007, էջ 17-21, տե՛ս և խ. Մ ա մ ու է լ յ ա ն. Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Երևան 1931, էջ 230, 244:

⁵⁵ Г. А. Ш а г о я н. Инварианты трансформация с. 29.

⁵⁶ [http://www.wikiznanie.ru/ru-wz/index.php/Радуга_\(в_славянской_мифологии\)](http://www.wikiznanie.ru/ru-wz/index.php/Радуга_(в_славянской_мифологии)).

⁵⁷ Այս անվանումների մի հսկայական շարք է հավաքել Բերտ Վոքսը, տե՛ս <http://linguistlist.org/issues/9/9-1795.html>:

կովկասյան ավարների և աֆրիկյան կաբիլների մոտ «աղվեսի / շնագայլի հարսանիքը» հանդես է գալիս որպես ծիածանի անվանում⁵⁸, ինչը պիտի բացատրվի արևմտյան և ծիածանի կապով: Չար ոգիների / վիուկների հետ է առնչվում, բացի նրանց հարսանիքից, Եվրոպայում լայնորեն տարածված «չարքը ծեծում է իր կնոջը / տատիկին» (ֆրանսիացիներն ավելացնում են՝ «և ամուսնացնում իր աղջկան»), «վիուկը բլիթ / կարագ է պատրաստում», «տոնավաճառ դժոխքում» և նման ձևերը⁵⁹: Հայոց մեջ առավել հայտնի են գելն է ցոթում կամ գայլի հարսանիք, գելցնկնուկ ապա և քաջքը տղա է բերում⁶⁰ արտահայտությունները (կան և «ճնճղուկների հարսանիք» և «եղնիկը սարում ծնում է» ձևերը): «Գայլի հարսանիքի» ինձ հայտնի գուգահեռները հայերի հարևան ժողովուրդների՝ արամեական («գայլերը հարսանիք են անում»), քրդական («գայլի և աղվեսի հարսանիք») և արխազական («գայլն ամուսնանում է, աղվեսը՝ նայում») բանահյուսությունից են՝ այլուրեք այլ կենդանիներ են:

Այս նույնատիպ անվանումները տարածված են աշխարհի՝ իրարից հեռու գտնվող և իրար ոչ ազգակից բազում լեզուներում: Այսպիսի լայն տարածվածությունը մասնանշում է համընդհանուր մարդկային պատկերացումների մի համալիր, որի մասնավոր դրսևորումները պիտի լինեն դրանք: Պարզ է նաև, որ դրանք, վերջին հաշվով, գալիս են մարդկության նույն վաղնջական ակունքներից: Անձրև է գալիս՝ արևի, երկնքի աստվածությունը բեղմնավորում է երկիրը: Ընդ որում, ոչ թե սովորական, մթամած եղանակին, այլ՝ լուսավոր, արևոտ, այսինքն՝ այդ բեղմնավորումը տեղի է ունենում անթաքույց, տոնական մթնոլորտում, որն է սեռերի «տոնական միավորումը»՝ հարսանիքը: Մնացած աշխարհը, հատկապես՝ կենդանիները, որոնք կարող են համարվել նաև աստծու սիմվոլներ, կրկնում են երկնային աստծու գործողությունը: Հասկանալի է, որ Աֆրիկայում՝ մարդկության օրրանում, «փղի / առյուծի հարսանիք» և նման արտահայտությունները «սեռական գործողության» նրբասացություններ (էվֆեմիզմներ) են ընդամենը:

Արևմտյան, արևի տակ փայլվող անձրևի կաթիլներով, հիշեցնում է Արտաշեսի և Մաթենիկի հարսանիքի ոսկու և մարգարտի անձրևը: Մյուս կողմից, իր արտասովորությամբ, այն թեև տոնական, բայց և տարաշխարհիկ տպավորություն է թողնում: Այն կարող էր վերագրվել հենց տարաշխարհիկ, խթոնիկ, տրիքստերային կերպարների և կենդանիների, որոնցից, ողջ աշխարհում, առավել հայտնի է աղվեսը: Այսպիսով՝ բնության «տիեզերական, աստվածային հարսանիքը», կարող է վերաբերել հատկապես տրիքստերային տիպի խթոնիկ կենդանիների, որոնցից ընդամենը մեկ քայլ է «չար ոգիների հարսանիք / տոնախմբությունը» (աղվեսը կամ գայլը միևնույն ժամանակ նաև չար ոգի է, տե՛ս ստորև): Ընդ որում, կարծես թե շոշափվում է մի վաղնջական, համընդհանուր առասպելական թեմա, իր տարբեր դրսևորումներով:

⁵⁸ Ю. Е. Березкин. *Նշվ. աշխ.*, 92:

⁵⁹ Б. Т о р п. Нордическая мифология. М., 2008, с. 541.

⁶⁰ Մ. Ա բ է ղ յ ա ն. *Նշվ. աշխ.*, հ. Է, էջ 92, Ա. Ս ու թ ի ա ս յ ա ն, Մ. Գ ա լ ս տ յ ա ն. *Նշվ. աշխ.*, էջ 132:

Դա Վ. Իվանովի և Վ. Տոպորովի վերակազմած «հիմնական առասպելն» է ամպրոպի (երկնքի) աստծու, նրա հակառակորդի և ընտանիքի մասին, տարածված գլխավորապես հնդեվրոպական, բայց նաև որոշ ոչ հնդեվրոպական ավանդույթներում: Ըստ այդ առասպելի՝ ամպրոպի, երկնքի աստվածը զուգավորվում է երկրի, ստորերկրյայքի հետ կապված իր կնոջ հետ: Կնոջ անհավատարմության համար աստված պատժում է կնոջը և որդիներին. ցած է նետում երկնքից, հարվածում կայծակով ու որոտով, վերածելով հատկապես խթոնիկ արարածների (ընդ որում, և՛ բեղմնավորումը և՛ պատիժը կարող են պատկերացվել որպես կայծակի հարվածներ)⁶¹: Այս սխեման միանգամայն հարմար է բերված բազմաթիվ անվանումների մեկնաբանության համար (հմատ. օրինակ, չարքի՝ իր կնոջը ծեծելը որպես ամպրոպի աստծու կողմից կնոջը պատժելու վերափոխված մի պատկեր):

Ստորև՝ միայն հայկական նյութի մասին: Հայկական ավանդական պատկերացումներում գայլը ոչ միայն զագան է, այլև երկոտանի մի դև (ինչպես, օրինակ, ճապոնական ադվենսները, որոնց հարսանիքի մասին է պատմվում Ակիրո Կուրոսավայի «Երազներ» ֆիլմում): Նրա ոտնաթաթերը շրջված են հետ, ինչպես քաջքերինը, նա ծնվում է, ինչպես քաջքը՝ արև ժամանակ անձրևելիս, և կայծակը, բոլոր չարքերի ու դևերի հետ միասին, ոչնչացնում է նաև գայլերին⁶²: Այսպիսով՝ կարելի է ասել, որ գայլ-դևերը, որոնք տեսքով նման են քաջքերին և ծնվում, ապրում ու մեռնում են ինչպես քաջքերը, ուղղակի նույնական են քաջքերին: Հատկանշական է, որ հնդեվրոպական լեզուներում գայլ տերմինը և ամպրոպի աստծու հակառակորդի անունը հանգում են համանուն արմատների (*wel-)⁶³: Ուրեմն, քաջ-գայլերը ուղղակի նույնացվել են ամպրոպի աստծու հակառակորդ-որդիների հետ: Դատելով եղած բանահյուսական նյութից, քաջքերի հիմնական զբաղմունքը հարսանիքն է (նույնը և այլատեսակ չար ոգիներինը այլ ժողովուրդների պատկերացումներում), ինչը նույնպես պետք է դիտվի այս համատեքստում:

«Հիմնական առասպելի» շրջանակում արևմաղը որպես «չարքերի ծնունդ / հարսանիք / տոնախմբություն» կարող է բացատրվել նաև հետևյալ կերպ: Գայլերը և չար ոգիները հակադիր են ամպրոպին և պիտի վախենան որոտից ու կայծակից, որը սպանում է իրենց: Անձրևի ժամանակ արև կարող է լինել, երբ

⁶¹ Այս վերակազմության վերաբերյալ տե՛ս В. В. Иванов, В. Н. Топоров. *Նշվ. աշխ.*, էջ 75, 115, ապա և Վ. Տոպորովի մի շարք աշխատություններում, տե՛ս օրինակ В. Н. Топоров. Mousai: “музы”: соображения об имени и предыстории образа (к оценке фракийскогоклада). Славянское и балканское языкознание, Античная балканистика и сравнительная грамматика. М., 1977, с., 32, 53, *ն ւ լ յ ն ի*՝ Семантика мифологических представлений о грибах. Balcanica. Лингвистические исследования. М., 1979, с. 266; *ն ւ լ յ ն ի*՝ Исследования по этимологии и семантике. М., 2004, с. 364:

⁶² Քաջքերի, գայլ դեմոնի և նրանց միանման հատկանիշների մասին տե՛ս Մ. Արեղյան. *նշվ. աշխ.*, էջ 85-89, 92:

⁶³ Այս արմատի առասպելաբանական արտացոլումների վերաբերյալ տե՛ս В. В. Иванов, В. Н. Топоров. *Նշվ. աշխ.*, А. Е. Петросян. Отражение индоевропейского корня *wel- в армянской мифологии. – *ՀՄՄՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտություններին*, 1987, № 1:

չկան ամպրոպային ամպեր և կայծակ չի կարող լինել: Դա տոն է ոչ միայն երկնքի ու երկրի, այլև նրանց խթոնիկ որդիների՝ գայլերի և չար ոգիների համար՝ կայծակ չի լինելու:

Արևմտյան առնչությամբ արժե անդրադառնալ մի հայտնի հայկական լեգենդի: Ըստ դրա՝ հայոց լեռները հնում եղբայրներ են եղել և ամեն առավոտ նախ կապել են գոտիները և հետո միայն բարևել միմյանց: Մի անգամ եղբայրները բարևել են իրար նախքան գոտիները կապելը, ինչի պատճառով աստված պատժել է նրանց և վերածել լեռների⁶⁴: Այս լեգենդը համահունչ է ժողովրդական այն սովորության հետ, ըստ որի առավոտյան միայն լվացվելուց հետո է կարելի իրար բարևել՝ «բարի լույս» ասել⁶⁵: Լեգենդի համեմատությունն այդ սովորության հետ տալիս է գործողությունների հետևյալ շարքերը. մի դեպքում՝ արթնանալ - գոտի կապել - բարևել, իսկ մյուսում՝ արթնանալ - լվացվել - բարևել: Այսինքն՝ գոտի կապելը, այս համաստեքատում, ինչ-որ կերպ հավասարագոր է լվացվելուն: Ինչպես ասվել է, առասպելաբանական մտածողությունը ամեն ինչի սկիզբը համարում է նախադեպը. այդպիսի մի նախադեպ է թվում անձրևի ավարտին՝ երկնքի ու արևի բացվելը և ծիածանի հայտնվելը: Թուխ ամպերը մթնեցնում են երկինքը («գիշեր»), ապա անձրև է գալիս՝ երկնքի արև-աստվածը «լվացվում» մաքրվում է, հետո ծիածան է առաջանում՝ աստված կապում է իր գոտին, և բացվում են լուսավոր երկինքն ու արևը՝ աստված բարևում՝ «բարի լույս» է մաղթում:

Վրացական համապատասխան նյութը, որը ներկայացված պատկերի մի պարզորոշ իյուստրացիան է թվում: Այդ սովորությունը՝ «բարի լույս» ասել միայն լվացվելուց հետո, տարածված է նաև որոշ հարևան ժողովուրդների մեջ (վրացիներ, ասորիներ, եգիպտացիներ, թուրքեր): Եվ որքան հատկանշական է, որ վրացիներն արև ժամանակ անձրևելիս ասում են՝ *mze pirs iban* «արևը երեսն է լվանում»: Իսկ գոտի-լվացվել/ անձրև կապը կարող է լուսաբանվել ծիածանի թուրքերեն անվանումներից մեկով՝ «անձրևի գոտի»:

Ծիածանի տակով անցնելը

Հայկական ժողովրդական մի հավատալիքի համաձայն, ծիածանի տակով անցնելը առաջ է բերում սեռի փոփոխություն: Այդ հավատալիքը, որոշ տարբերակներով, հայտնի է նաև այլ ժողովուրդների մեջ (պարսիկներ, վրացիներ, կովկասյան ժողովուրդներ, քրդեր, թուրքեր, հույներ, հարավային սլավոններ, ուկրաինացիներ, ռումինացիներ, հունգարացիներ, բրետոնցիներ, կատալոնցիներ և այլն)⁶⁶: Այդ պատկերացման հետ համահունչ է, թեև ծագումնաբանորեն դժվար է ուղղակի կապ տեսնել, ծիածանի գույներով կազմված դրոշմը, որը 1970-ական-

⁶⁴ Այս լեգենդի մանրամասն վերլուծությունը տե՛ս Ս. Հ ա ր ր ո թ յ ո ն յ ա ն. Հայկական առասպելաբանություն. Բեյրութ, 2000, էջ 210-219:

⁶⁵ Ս. Հ ա ր ր ո թ յ ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 217: Այդ սովորության վերաբերյալ տե՛ս Ս. Ս տ ե փ ա ն յ ա ն. Ծիածանի լվացումները հայոց կենցաղում. – «Նոր ազգագրական հանդես», Ս, 2005, էջ 21:

⁶⁶ Ю.Е. Б е р е з к и н. Նշվ. աշխ., 92:

երից դարձել է միասեռականների և տրանսֆերտիստների՝ սեռը փոխաձևների սինվոլը, սկզբից՝ ԱՄՆ-ում, հետո՝ այլուրեք⁶⁷:

Ծիածանը հանդես է գալիս որպես տոնական գոտի, տոնականության խորհրդանիշ: Ուրեմն, տոնը՝ ոգիների հարսանիքը և այլն, կարող էր կենտրոնանալ հատկապես ծիածանի տակ: Իսկ վաղնջական տոնի (կառնավալային տիպի) կարևոր առանձնահատկություններից է հասարակության հիմնական հակադրությունների շրջումը (երբ ստրուկը դառնում է տեր, կինը՝ տղամարդ և այլն)⁶⁸: Հիշենք նաև ծիածանի՝ որպես գոտու ընկալումը: Վաղնջական առասպելաբանական պատկերացումների համաձայն տիեզերքը առաջացել է դիցաբանական «առաջնամարդու»՝ աշխարհի մարդակերպ մոդելի մարմնի մասերից⁶⁹: Մարդը դիտվել է որպես մանրատիեզերք՝ միկրոկոսմոս: Գոտին բաժանում է մարդու մարմինը երկու մասի՝ վերին և ստորին, որոնք տիեզերական մակարդակում համապատասխանում են երկնքին և երկրին՝ առաջացած տիեզերածին էակի մարմնի վերին և ստորին մասերից: Տիեզերքի այս մասերը հակադրված են իրար փոխընդհանուր՝ երկյակ հակադրության սկզբունքով՝ տղամարդ-կին, աջ-ձախ, յուրային-օտար, սրբազան-սովորական և այլն, որտեղ վերին մասը համապատասխանում է հակադրության առաջին, իսկ ստորինը՝ երկրորդ անդամներին: Ամեն անգամ ծիածանը՝ երկնային գոտին կապելիս, երկնային էակը տիեզերքը բաժանում է երկու մասի՝ «վերին», որտեղ դիտողը և արևն են, և նրանց հակադիր՝ «ստորին» (ծիածանից անդին) կողմերի: Այն ինչ այս՝ «մեր» մասում համապատասխանում է երկյակ հակադրությունների առաջին անդամներին, մյուս մասում պիտի համապատասխանի երկրորդ անդամներին և ընդհակառակը:

РАДУГА В АРМЯНСКИХ ПРЕДСТАВЛЕНИЯХ. СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ

АРМЕН ПЕТРОСЯН

Р е з ю м е

В диалектах армянского языка имеются три большие группы названия радуги – пояс (бога или святого), лук (бога или святого) и зеленый – (синий)–красный. Первые два имеют параллели во всем мире, а третье – сугубо местное название. Литературное название сіасап тоже этимологизируется как «пояс бога неба». Выявляются связи с древнейшими мифами о космогонии и

⁶⁷ Ծիածան պատկերող դրոշներ օգտագործվել են տարբեր երկրներում, հնից մինչև այսօր՝ Բնկաների պետություն, Գերմանիա (Գյուղացիական պատերազմ), ժամանակակից խաղաղության շարժում, կոոպերատիվ միջազգային շարժում, Հրեական ինքնավար մարզ (Ռուսաստանում) և այլն:

⁶⁸ Այս հարցերի շուրջ տե՛ս օրինակ Լ. Ա. Ա Բ Ր Ա Մ Յ Ա Ն. Первобытный праздник и мифология. Ереван, 1983, с. 38–40, 126–127:

⁶⁹ Мифы народов мира, т. 2, с. 300.

«священном браке» неба и земли. Зеленый–красный означает также «свадьба» и ассоциируется с двухцветным поясом жениха. Исследуются также причины некоторых фольклорных представлений, как свадьба волков «слепой дождь», изменение пола при переходе под радугой и т. д.

RAINBOW IN ARMENIAN TRADITION. COMPARATIVE ANALYSIS

ARMEN PETROSSYAN

S u m m a r y

There are three large groups of the appellations of rainbow in Armenian dialects: belt (of god or a saint), bow (of god or a saint) and green – (blue) – red. The formers have parallels in the whole world, the latter is a specific local appellation. The literary word *ciacan* “rainbow” is also etymologized as “belt of god of sky”. The associations of the rainbow with the archaic myths of cosmogony and hierogamy between heaven and earth are revealed. Green–red means “marriage” as well and is associated with the two-coloured belt of the bridegroom. Some other folk-lore ideas associated with the rainbow are considered as well (e.g. marriage of wolves “sunsower”, the gender change under the rainbow, etc.).